



## ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

ԱՍՍՏԵԱԼ ԻՀԱՆԴԻՍԻ ԹԱՂԱՐԱՆ

ՄԻՆԱՍԱՅ ԳԵՈՐԳԵԱՆ ՇԼԹԵԱՆՑ

ՅՈՐԳԻՈՅ ՀԱՆԳՈՒՅԵԼՈՅՆ

ԻԲԺԵԿԷ ԱԼԵԲՍԻԱՆՈՍԷ ԳԵՈՐԳԵԱՆ ՇԼԹԵԱՆՑ.

Ո՛վ Քրիստոսասէր ժողովուրդք, ահա հասաւ այն ցաւալի վայրկեանը՝ յորում ես պարտաւոր եմ տալ հրաժարական համբոյր այն մարդուն՝ որում կապտկանի բոլոր իմ կեանքս, բոլոր ներկայ բաղդաւորութիւնս: Հայրս այն մարդոց կարգէն էր՝ որք կերեւնան դարերով, բայց կմեռանին անանուան՝ իրենց համեստ եւ խաղաղ կեանքին պատճառաւ: Իմ հայրս հարուստ չէր, որ իւր ոսկւով եւ արծաթովը լինի եղանաւոր. հայրս ուսումնական չէր, բայց աւելի բաղդաւոր քան զհարուստը, առաւել բաղդաւոր քան զուսումնականը: Հարստութիւնը չէր դիպած երկարէ արկղներու մէջ, որ վրան նստի եւ դողդըղայ. հարստութիւնը նորա հոգւոյն մէջ էր, որովհետեւ նա միշտ զոհ էր իւր երկնային վիճակովը, միշտ հեզ եւ բարեպաշտ, բարեհոգի եւ համբերող... Հարուստ չէր, բայց աւելի առաւել՝ քան ամենահարուստը. չէր ուսումնական՝ այլ ուսումնասէր. չկար աղքատ որ դառնար նորա քովէն առանց օգնութեան:

Այս խօսքերս զովասանական չեն, ամենեւին ոչ. սոքա յստակ արձագանգ են սրտիս եւ ձայն ճշմարտութեան: Հայրիկ բազմերախտ, չեմ կրնար յայտնել իմ ցաւս լալով, զոռալով. երբ լինէր անեղագոյց մօնջիւն առիւծին եւ սարսափելի որոտումն ամպոց, այդ ձայնը եւս անգոր կլիներ խափանել այն անջնջելի կսկիծը որ բողոքցիր իմ սրբտիս մէջ: Իմ տրտմութիւնս անձայն է եւ անմոռոնջ: Ո՛րք առաւել ցաւ եւ կսկիծ՝ քան ինձ: Բռան տարի աշխատեցար զիշեր եւ ցերեկ ինձի համար, տոբիր կատարեալ ուսումն. բայց սերմանած սերմիդ պտուղները դեռ նոր սկսեցր էին աճիլ եւ զարգանալ՝ երբ բողոքցիր հեռացար: Ո՛րքան կուրախանայիր՝ ընդունելով համալսարանէն զովասանական ինձ բուղբեր. որպիսի անպատմելի ցնծումն

կպատեր ազնիւ հոգիդ: Ո՛րքան ուրախութիւն զգաց քո սիրտդ՝ տեսանելով զիս հասեալ նպատակիս՝ բժիշկ կատարեալ: Ո՛րքան ափսոսացիր որ հարուստ չես՝ երբ բուղբ առիր Խարքովայի Բոռֆեստորներէն՝ քե որդիդ յուղարկէ Փարիզ. որդիդ մեծ յոյս կուտայ ապագային: Ո՛րքան աղմկեալ սրտով խօսեցար մեր հարուստ անկին ազգականներուն վրայ, աւաղելով որ ոչ իրենց եւ ոչ ուրիշի օգուտ բերելով՝ աղքատաբար պիտի չորնան եւ բոռմին անպտուղ ծառերու նման... Ա՛խ որդի, կասէիր, ինչո՞ւ ես չունիմ այդ զարշիւ արծաթը, որ կրնամ զքեզ եւս բաղդաւոր անել աշխարհիս երեսը. ափսոս, սիրելիդ հայրիկ, որ մահուն խաղալիկ եղար. հազար ափսոս, որ չկրցար բոռֆեստորական պանծալի բազը տեսնել որդւոյդ ճակատին վերայ: Ա՛խ հայրիկ, քեզմով ես կորուսի բոլորը. դու էիր հայր, դու մայր կատարեալ, դու եղբայր, դու ընկեր, դու բարեբար եւ դու անաչառ դատաւոր բոլոր իմ կեանքիս: Քեզ լնջ, երանելիդ հոգի. քեզ հազար երանի. քո բոլոր բարեպաշտ կեանքդ մեզ յայտնի է. նայելով քո սուրբ կեանքիդ վերայ՝ ես շատ կգարմանայի քե տասնեւիննեւորորդ դարուս մէջ դեռ կգտնուին քեզ նման երանելի եւ հոգեսէր մարդիկ:

Իմ մխիթարութիւնս, հայրիկ, պէտք է լինի քո անոյշ եւ անմոռանալի յիշատակդ, եւ կատարումն այն սուրբ ցանկութեանդ՝ որ յայտնեցիր մահուանեղ մեկ քանի ժամ առաջ, այսինքն սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին պատմութիւնը յեղափոխել իզրարառէ յաշխարհաբար:

Այժմ, բարեաւ մնա, սիրելիդ հայրիկ. զնա խաղաղութեամբ իՔրիստոս, որում վայելէ փառք յաւիտենից յաւիտեանս: